# ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 15-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վարդապետ Նանյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսներ և սաներ:

Հավարտ Ս. Պատարագի Վարդանանց խորհրդին անդրադարձավ Հոգեշնորհ Հայր Սուրբը: «Մենք հիշում և ամեն անգամ տոնախմբում ենք Վարդանանց տոնը և պիտի նշենք, քանի դեռ երկրագնդի վրա մեկ հայ կա, որովհետև սա մեր ինքնության, մեր լինելության տոնն է: ....Փառք Աստծո, այսօր խաղաղություն է, և կարիքը չկա, որ մեր կյանքը տանք մեր հավատի և մեր Հայրենիքի համար: Սակայն մահվան հավասար կարևոր է նաև իմանալ, թե ինչպես ենք ապրում. լի հույսով առ Տեր, լի հավատքով առ ապագան»,- նշեց Հայր Վազգենն իր խոսքում:

Ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրվա առիթով Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Սրբության քաջառողջության ու կենաց արևշատության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության համար:

Ս. Պատարագից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Ս. Վարդանանց անմար հիշատակին: Հանդիսությունը բացեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը:

Վարդանանց նվիրված բանախոսությամբ հանդես եկավ քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանը: Շարականների և հայրենասիրական երգերի կատարումներով ելույթ ունեցան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը և ՀԲԸՄ ու Մայր Աթոռի Նորքի Հայորդյաց տան «Հայկազունք» համույթը: Երգչուհի Լեյլա Սարիբեկյանի կատարմամբ առաջին անգամ հնչեց նոր հեղինակված՝ «Վարդանանք հայոց» երգը (խոսքերի հեղ.՝ Արփինե Թադևոսյան):

Հանդիսությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: «*....Վարդանանց տոնը դարեր շարունակ ուղեկցել է մեր ժողովրդին: Մեր ժողովուրդն ապրել է Վարդանանց խորհրդով: Այսօր էլ մենք խոսում ենք այդ խորհրդի մասին, իբրև մեր գոյության հիմնական երաշխիքի, իբրև ազգային մեր ոգու և դիմագծի պահպանության առհավատչյայի: Վարդանանց խորհուրդը Վարդանանց ոգու մեջ է: Դա վասն հայրենյաց և վասն հավատո իրենց ունեցած սերն էր*»,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն անդրադարձավ հատկապես վերջին շրջանին հնչող կոչերին՝ դառնալու դեպի մեր ազգային արմատները, և իբրև այդ դարձի ուղի հանրությանը տարբեր անհատների կողմից ներկայացվող զանազան արժեհամակարգերին:

Վեհափառ Հայրապետը, սակայն, նկատեց, որ այդ ճանաչողությունը և դարձը դեպի ազգային արմատներ ճշմարտապես և հարազատորեն արտացոլված է Վարդանանց ոգու մեջ: «*Եթե մենք ցանկանում ենք ճանաչել մեր արմատները, ճանաչել մեր ինքնությունը, պետք է հավատարիմ մնանք մեր սիրո մեջ առ Աստված և առ Հայրենիք: Եվ այդ սերը դարձնենք մեր կյանքի շարժիչ ուժը, մեր ինքնությունը նորոգող ուժը, մեր ազգը առաջնորդող ուժն ու զորությունը*», - ասաց Հայոց Հայրապետը:

Գարեգին Բ Կաթողիկոսը կարևոր նկատեց նաև, որ Վարդանանց տոնի ոգեկոչումը վերստին համազգային բնույթ ստանա, այն նշվի թե՛ կրթական հաստատություններում և թե՛ յուրաքանչյուր հայորդու հարկից ներս, դառնա զորության ու ներշնչումի, մեր կյանքի և աշխատանքի անհատական և համազգային հաղթության մի անսպառ ակունք: «*Եթե ուզում ենք, որ աղանդավորներ տեղ չունենան մեր կյանքից ներս, ուրեմն Վարդանանց ոգին պիտի կերտենք յուրաքանչյուր հայորդու և՛ սրտում, և՛ մտածողության մեջ: Եթե ուզում ենք, որ Հայրենիքն առաջընթաց և բարգավաճ կյանք ունենա, երջանկությունն ուղեկից դառնա մեր ժողովրդին, եթե ուզում ենք հեռու վանել մեզանից պարտվողականության գիտակցությունն ու մտածողությունը, եթե ուզում ենք քաջ սրտով մեր գլուխն ամեն երեկո բարձին դնել, ուրեմն պետք է Վարդանանց այդ ոգին ապրեցնել մեր մեջ, մեր ժողովրդի յուրաքանչյուր զավակի հոգուց ներս*»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը Վարդանանց տոնի նվիրական առիթով իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերեց հայ ժողովրդի բոլոր զավակներին, ովքեր այսօր նշում են իրենց անվանակոչության տոնը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*